Building a Europe
for and with children

Construire une Europe
pour et avec les enfants

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Recommendation CM/Rec(2012)2
of the Committee of Ministers to member States
on the participation of children
and young people under the age of 18

Recommandation CM/Rec(2012)2
du Comité des Ministres aux Etats membres
sur la participation des enfants
et des jeunes de moins de 18 ans

ARMENIAN LANGUAGE VERSION

Հանձնարարական CM/Rec(2012)2
անդամ երկրներին Նախարարների կոմիտեից երեխաների և
մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության
վերաբերյալ

Non-official translation
Traduction non-officielle

Երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցությունը

Եվրոպայի Խորհրդի Հանձնարարականը երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Բովանդակություն

Հատված I – Սահմանումներ . . . . . .
Հատված II – Սկզբունքներ. . . . . .
Հատված III - Միջոցառումներ . . . . . .
.

Մասնակցության իրավունքի պաշտպանությունը . . . . . .
Մասնակցության խթանումն ու իրազեկումը . . . . . .
Մասնակցության ոլորտների կառուցումը . . . . . .

Հանձնարարական CM/Rec(2012)2

անդամ երկրներին Նախարարների կոմիտեից երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ

(Ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 2012թ. մարտի 28-ին Նախարարների ներկայացուցիչների 1138-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15.*բ* հոդվածի պայմանների համաձայն,

Նկատի ունենալով երեխաների իրավունքների պաշտպանության՝ գոյություն ունեցող եվրոպական և համաշխարհային պարտավորությունների արդյունավետ իրագործումն ապահովելու անհրաժեշտությունը և մասնավորապես՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան (ETS № 5),
- Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան (ETS № 160),
- Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիան (ETS № 163),
- Եվրոպայի խորհրդի կոնվենցիան սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին (CETS № 201),
- Եվրոպական (վերանայված) կոնվենցիան երեխաների որդեգրության մասին (CETS № 202),
- Միավորված ազգերի կոնվենցիան երեխաների իրավունքների մասին (ՄԱԿԵԻՄ),
- Միավորված ազգերի կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին

Ուշադրության առնելով՝

- Եվրոպայի խորհրդի նպատակները երեխաների և երիտասարդության իրավունքների քաղաքականության բնագավառում,
- Եվրոպայի խորհրդի՝ Երկրների և կառավարությունների ղեկավարների երրորդ վեհաժողովը (Վարշավա, 2005) և նրանում ՄԱԿԵԻՄ-ի պարտավորությունների լիակատար իրագործման հանձնառությունը,
- Անդամ երկրներին Նախարարների կոմիտեի CM/Rec(2008)23 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի երիտասարդությանն առնչվող քաղաքականության մասին,
- Եվրոպայի խորհրդի՝ երիտասարդության համար պատասխանատու նախարարների՝ 1985-2008 թթ. կայացած ութ համաժողովների համապատասխան եզրակացությունները,
- Եվրոպայի խորհրդի «Կառուցել Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» ծրագիրը և երեխաների մասնակցության խթանման ռազմավարական շեշտադրումը,

Վկայակոչելով երեխաների և երիտասարդների մասնակցությանն առնչվող հանձնարարականները՝ ընդունված Նախարարների կոմիտեի, Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպայի խորհրդի տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից, մասնավորապես՝

- Rec(2005)5 Հանձնարարականը՝ փակ հիմնարկներում ապրող երեխաների իրավունքների մասին,
- Rec(2006)14 Հանձնարարականը՝ քաղաքացիության և հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության մասին,

- Rec(2006)19 Հանձնարարականը՝ դրական ծնողական խնամածությանը սատարող քաղաքականության մասին
- Rec(2009)10 Հանձնարարականը՝ երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարության մասին
- Rec(2010)7 Հանձնարարականը՝ Հանուն ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության Եվրոպայի խորհրդի խարտիայի մասին,
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուղենիշները երեխաներին նպաստող դատավարության մասին (2010),
- Խորհրդարանական վեհաժողովի 1864 (2009) հանձնարարականը «Իրենց վերաբերող որոշումներին երեխաների մասնակցությունը խթանելու» մասին,
- Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 128 (2003) հանձնարարականը «Տեղական և տարածքային կյանքին երիտասարդների մասնակցության» մասին եվրոպական վերանայված խարտիան,

Վկայակոչելով ՄԱԿԵԻՄ-ը և մասնավորապես նրա 12-րդ հոդվածը, որը հայտարարում է.

«1. Անդամ երկրները սեփական կարծիք ձևավորելու ընդունակ երեխայի համար պետք է ապահովեն այդ կարծիքը ազատորեն արտահայտելու իրավունքը երեխային առնչվող բոլոր գործերում, և այդ կարծիքին պետք է տրվի պատշաճ արժեք՝ երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան։

1. Այս նպատակով երեխային մասնավորապես պետք է հնարավորություն ընձեռվի լսված լինելու երեխային առնչող բոլոր իրավական և վարչական վարույթներում՝ կամ ուղղակիորեն, կամ ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով՝ ազգային օրենսդրության ընթացակարգային կանոններին համապատասխանող ձևով»[1],

Նշելով, որ 12-րդ հոդվածը՝ որպես ՄԱԿԵԻՄ-ի գլխավոր սկզբունք, կապված է կոնվենցիայի մյուս բոլոր հոդվածների հետ և մասնավորապես 2-րդ (անխտրականության իրավունքը), 3-րդ (երեխայի բարձրագույն շահերի մտահոգությունը), 5-րդ (ծնողների ղեկավարումը և երեխայի ունակությունների զարգացումը), 6-րդ (կյանքի, գոյատևելու և զարգացման իրավունքը), 13-րդ (արտահայտման ազատության իրավունքը), 15-րդ (միություններ կազմելու իրավունքը), և 17-րդ (տեղեկացված լինելու իրավունքը) հոդվածների հետ,

Գիտակցելով, որ՝

- լսված լինելու և լուրջ ընդունվելու իրավունքը հիմնարար է ամեն մի երեխայի և երիտասարդի մարդկային արժանապատվության և առողջ զարգացման համար,

- երեխաներին և երիտասարդներին լսելը և նրանց տարիքին և հասունությանը համապատասխան՝ նրանց կարծիքին արժանի կշիռ տալը անհրաժեշտ է իրենց վերաբերող բոլոր գործերում նրանց բարձրագույն շահերը հաշվի առնելու և բռնությունից, չարաշահումից, անփութությունից և վատ վերաբերմունքից պաշտպանված լինելու նրանց իրավունքը արդյունավետ իրագործելու համար,

- երեխաների և երիտասարդների կարողությունները և այն նպաստը, որ նրանք կարող են

[1] Տե՛ս նաև Երեխայի իրավունքների կոմիտե (2009), Ընդհանուր մեկնաբանություն № 12՝ լսված լինելու երեխայի իրավունքի մասին։

բերել, եվրոպական հասարակություններում մարդու իրավունքների, ժողովրդավարության և սոցիալական միավորման զորացման միակ ռեսուրսն է,

Հանձնարարում է, որ անդամ երկրների կառավարությունները

1. ապահովեն, որ բոլոր երեխաներն ու երիտասարդները կարողանան իրականացնել լսված լինելու, լուրջ ընդունվելու և իրենց վերաբերող բոլոր հարցերում որոշում ընդունելուն մասնակցելու իրենց իրավունքը, և որ իրենց կարծիքին պատշաճ արժեք կտրվի՝ ըստ իրենց տարիքի և հասունության,

2. քաջալերեն այս հանձնարարկանի իրագործման վերաբերյալ գիտելիքների և լավ փորձի փոխանակումը տեղական, տարածքային և ազգային մակարդակներով և քաղաքացիական հասարակության հետ,

3. իրենց օրենսդրության, քաղաքականությունների և գործունեության մեջ ուշադրության առնեն այս հանձնարարականի հավելվածում պարունակվող սկզբունքներն ու միջոցառումները,

4. ապահովեն, որ այս հանձնարարականը, իր հավելվածով հանդերձ, թարգմանվի և ըստ հնարավորին լայն տարածվի, այդ թվում երեխաների և երիտասարդների մեջ, երեխաներին և երիտասարդներին հարմար հաղորդակցման միջոցների օգտագործմամբ։

Հրահանգում է Գլխավոր քարտուղարին՝ քաջալերել երեխաների և երիտասարդների մասնակցությունը Կազմակերպության չափորոշիչների հաստատման, համագործակցական և գնահատողական գործունեությանը և փոխանցել այս հանձնարարականը Եվրոպայի խորհրդի համապատասխան մշտական կոմիտեներին, խորհրդակցական և խորհրդատվական մարմիններին, ինչպես նաև պայմանագրային և վերահսկման մեխանիզմներին՝ կոչ անելով նրանց հաշվի առնել այս հանձնարարականը իրենց համապատասխան աշխատանքում,

Հրահանգում է Գլխավոր քարտուղարին՝ փոխանցել այս հանձնարարականը Եվրոպական մշակութային կոնվենցիայի բոլոր մասնակից երկրներին (ETS № 18), որոնք Եվրոպայի խորհրդի անդամ չեն։

Հավելված CM/Rec(2012)2 հանձնարարականին

Հատված I - Սահմանումներ

Ըստ այս հանձնարարականի նպատակի՝

- «երեխաներ և երիտասարդներ» տերմինը վերաբերում է մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անձի[2],

- «մասնակցությունը» անհատների և անհատների խմբերի մասին է, որոնք ունեն իրավունք, միջոցներ և հնարավորություն և, եթե անհրաժեշտ է, աջակցություն՝ ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, լսվելու և նպաստելու որոշումներ ընդունելուն իրենց վերաբերող հարցերում, ընդ որում, նրանց կարծիքին պետք է տրվի պատշաճ արժեք՝ նրանց տարիքի և հասունության համապատասխան։

Հատված II - Սկզբունքներ

Չկա երեխայի և երիտասարդի որևէ տարիքային սահմանափակություն՝ ազատորեն արտահայտելու համար իր կարծիքը։ Բոլոր երեխաներն ու երիտասարդները, ներառյալ նախադպրոցական, դպրոցական տարիք ունեցողները, և կրթության լրիվ դասընթացն ավարտածները, իրավունք ունեն, որ իրենց լսեն իրենց վերաբերող հարցերում, ընդ որում, նրանց կարծիքին պետք է տրվի պատշաճ արժեք՝ նրանց տարիքին և հասունությանը համապատասխան։

Երեխաների և երիտասարդների մասնակցության իրավունքը վերաբերում է առանց խտրականության որևէ հիմունքով, ինչպես՝ ռասան, ազգությունը, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքը, ազգային կամ սոցիալական ծագումը, ունեցվածքը, հաշմանդամությունը, ծնունդը, սեռական կողմնորոշումը կամ այլ կարգավիճակը։

Ուշադրություն պետք է դարձնել երեխաների և երիտասարդների ունակությունների զարգացում հասկացությանը։ Քանի որ երեխաներն ու երիտասարդները գնալով ձեռք են բերում ավելի մեծ ունակություններ, մեծերը պետք է խրախուսեն նրանց՝ ավելի աճող չափերով օգտվելու իրենց վերաբերող գործերի վրա ազդելու իրենց իրավունքից։

Հատուկ ջանքեր պետք է գործ դնել հեշտացնելու մասնակցությունը պակաս հնարավորություններ ունեցող երեխաների և երիտասարդների, այդ թվում՝ խոցելի և խտրականության ենթարկվածների համար՝ ներառյալ բազմակի խտրականությունը։

Ծնողները և խնամողները առաջնային պատասխանատվություն ունեն երեխայի դաստիարակության և զարգացման համար և, որպես այդպիսիք, հիմնարար դեր են խաղում երեխայի մասնակցության իրավունքը ի ծնե ամրացնելու և աճեցնելու մեջ։

---

[2] 18-ը Եվրոպայի խորհրդի անդամ երկրների մեծամասնության համար սովորական տարիքն է։ Թեև ՄԱԿԵԻՄ-ը մինչև 18 տարեկան անձանց բնորոշում է որպես երեխա, առօրյա խոսքում «երիտասարդ»-ը հաճախ գործածվում է նկարագրելու համար 12-13 տարեկանից մեծ անձանց։ Բացի այդ, անձինք, որոնք 13-ից 17 տարեկան են, սովորաբար իրենց համարում են ավելի շատ «երիտասարդ», քան «երեխա» և հաճախ գերադասում են, որ իրենց այդպես դիմեն։ Վիճակագրական նպատակներով ՄԱ-ն 15-ից 24 տարեկան անձանց բնորոշում է որպես «երիտասարդություն»։ Այս սահմանումը չի վնասում երեխային ՄԱԿԵԻՄ-ում և այլ համապատասխան միջազգային պայմանագրերում տրվող իրավական սահմանմանը։

Իսկական և իմաստալից մասնակցության հնարավորություն ունենալու համար երեխաներին և երիտասարդներին պետք է տրամադրվի ամբողջ համապատասխան տեղեկատվությունը և համարժեք աջակցություն ցույց տրվի ինքնապաշտպանության համար՝ իրենց տարիքին և հանգամանքներին համապատասխան:

Եթե մասնակցությունը պետք է լինի արդյունավետ, իմաստալից և կայուն, այն պետք է ըմբռնվի որպես գործընթաց և ոչ թե միանգամյա իրադարձություն, և կպահանջի շարունակական իրագործում՝ ժամանակի և ռեսուրսների առումով:

Երեխաներն ու երիտասարդները, որոնք օգտվում են ազատորեն իրենց կարծիքը արտահայտելու իրավունքից, պետք է պաշտպանված լինեն վնասից՝ ներառյալ ահաբեկումը, ճնշամիջոցները, հետապնդումը և մասնավոր կյանքի իրենց իրավունքի ոտնահարումը:

Երեխաներն ու երիտասարդները միշտ պետք է լիովին տեղեկացված լինեն իրենց մասնակցության ծավալի մասին, ներառյալ նրանց ընդգրկման սահմանափակումը, իրենց մասնակցությունից սպասվող և առկա արդյունքները, և թե ինչպես են նրանց կարծիքները առավելագույնս հաշվի առնվել:

ՄԱԿԵԻՄ-ի 12-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր գործընթացները, որոնցում լսվում են երեխաներն ու երիտասարդները, պետք է լինեն թափանցիկ և տեղեկատվական, կամավոր, օրինավոր, երեխաների կյանքին համապատասխան, երեխաների համար բարեկամական միջավայրում, ներառող (ոչ խտրական), վարժեցման աջակցությամբ, ապահով և վտանգի նկատմամբ զգայուն ու հաշվետու: Անդամ երկրները պետք է ներառեն այս պահանջները բոլոր օրենսդրական և այլ միջոցառումների մեջ՝ այս հանձնարարականի իրագործման համար:

Հատված III – Միջոցառումներ

Մասնակցության իրավունքի պաշտպանությունը

Երեխայի կամ երիտասարդի մասնակցության իրավունքը պաշտպանելու համար անդամ երկրները պետք է՝

- ըստ հնարավորին առավելագույն իրավական պաշտպանություն ընձեռեն երեխաների և երիտասարդների մասնակցության իրավունքին, այն նրառելով սահմանադրությունների, օրենսդրության և կանոնադրությունների մեջ,

- ձեռնարկեն պարբերական ստուգումներ՝ ինչ աստիճանով են լսվում և լուրջ ընդունվում երեխաների և երիտասարդների կարծիքները գոյություն ունեցող օրենսդրության, քաղաքականության և գործունեության մեջ, և ապահովեն, որ այդ ստուգումներում երեխաների և երիտասարդների սեփական գնահատումներին պատշաճ արժեք տրվի,

- երեխաներին և երիտասարդներին տրամադրեն արդյունավետ փոխհատուցում և իրավական պաշտպանություն միջոցներ՝ երեխաներին հարմար ձևով գանգատարկման և դատական ու վարչական ընթացակարգերով, այդ թվում, մատչելի օժանդակությամբ և աջակցությամբ, ապահովելով, որ այդ մեխանիզմները հասանելի լինեն երեխաներին և երիտասարդներին,

- ապահովեն, որ առկա լինեն պաշտպանական երաշխիքներ այն երեխաների և երիտասարդների համար, որոնք հատկապես խոցելի են իրավունքի զանցառումների դեմ, ներառյալ ծնողներից բաժանվածներին, փոքրամասնությունների խմբերին պատկանողներին, հաշման-

դամներին և առողջապահական ու ազատազրկման հաստատություններում կամ համայնքային տներում ապրողներին,

- ստուգեն և ջանան վերացնելու օրենքի կամ սովորության արգելքները, որոնք սահմանափակում են երեխաների կամ երիտասարդների՝ իրենց վերաբերող բոլոր հարցերում լսված լինելու իրավունքը,

- ընդունեն համաձայնեցված մոտեցում երեխաների և երիտասարդների մասնակցությունն ամրապնդելու գործին, և ապահովեն, որ մասնակցությունը հիմնուղի դառնա որոշումներ կայացնող և քաղաքականություն իրականացնող կառույցներում,

- հիմնեն, եթե այն դեռ չկա, մարդու իրավունքների համապատասխան և անկախ հաստատություններ, ինչպես՝ երեխաների իրավունքների օմբուդսմեն/հանձնակատար՝ փարիզյան սկզբունքների համաձայն[3],

- հատկացնեն համարժեք ֆինանսական ռեսուրսներ և ապահովեն ձեռնհաս մարդկային ռեսուրսներ՝ սատարելու համար երեխաների և երիտասարդների մասնակցությունը պաշտոնական և ոչ պաշտոնական միջավայրերում

Գովազդում և տեղեկատվություն մասնակցության մասին

երեխաների և երիտասարդների մասնակցության մասին տեղեկատվություն տարածելու և գիտելիքներ ավելացնելու համար անդամ երկրները պետք է՝

- ձեռնարկեն հանրության տեղեկացման և կրթական ծրագրեր՝ խորացնելու համար երեխաների և երիտասարդների մասնակցության իրավունքի իմացությունը ընդհանուր հանրության, երեխաների, երիտասարդների, ծնողների և մասնագետների մեջ,

- մեծացնեն երեխաների և երիտասարդների մասնակցությանը վերաբերող մասնագիտական կարողությունները ուսուցիչների, իրավաբանների, դատավորների, ոստիկանության, սոցիալական աշխատողների, հանրային աշխատողների, հոգեբանների, խնամատուների, համայնքային տների և բանտերի պաշտոնյաների, առողջապահության մասնագետների, քաղաքացիական ծառայողների, ներգաղթի գծով պաշտոնյաների, կրոնական առաջնորդների և լրատվության անդամների ինչպես նաև մանկական և երիտասարդական կազմակերպությունների առաջնորդների մեջ: Որտեղ հնարավոր է, իրենք երեխաներն ու երիտասարդները պետք է ներգրավվեն կարողությունների այս կառուցման մեջ՝ որպես վարժեցնողներ և փորձագետներ,

- երեխաներին և երիտասարդներին իրենց տարիքին և հանգամանքներին համապատասխան ձևով տրամադրեն տեղեկատվություն, այդ թվում՝ ոչ գրավոր ձևերով և սոցիալական ցանցերի միջոցով ու այլ լրատվամիջոցներով իրենց իրավունքների, մասնավորապես մասնակցելու իրավունքի, այն իրականացնելու իրենց մատչելի հնարավորությունների մասին, և թե որտեղ կարող են նրանք աջակցություն գտնել այդ հնարավորություններից օգտվելու համար,

- դպրոցական ծրագրի բաղկացուցիչ մաս դարձնեն երեխաների և 18 տարին չլրացած երիտասարդների իրավունքները, ներառյալ մասնակցության իրավունքը,

---

[3] ՄԱ Գլխավոր ասամբլեայի 1993թ. դեկտեմբերի 20-ի 48/134 որոշումը:

- առաջարկեն երեխաների և 18 տարին չլրացած երիտասարդների իրավունքների ուսուցում երեխաների և երիտասարդների հետ կապված աշխատանքի բոլոր մասնագիտությունների ակադեմիական ծրագրերում,

- խթանեն հետազոտությունը երեխաների և երիտասարդների մասին, նրանց միջոցով և նրանց հետ՝ երեխաների կարծիքի և կյանքի փորձի մասին ավելի լավ հասկացողության հնարավորություն տալու, նրանց մասնակցության խոչընդոտները և դրանք հաղթահարելու ուղիները ճանաչելու նպատակով,

- գովազդեն հավասարակիցների աջակցությունը և տեղեկատվական ցանցերը երեխաների միջև՝ իրենց մասնակցության իրավունքն իրագործելու կարողությունը կառուցելու նպատակով։

Մասնակցության ոլորտների կառուցումը

բոլոր երեխաների և երիտասարդների համար իրենց վերաբերող բոլոր գործերին մասնակցելու հնարավորությունները առավելագույնի հասցնելու նպատակով անդամ երկրները պետք է՝

- օրենսդրության և ծնողների վարժեցման ծրագրերի միջոցով քաջալերեն ծնողներին ու խնամողներին՝ հարգելու երեխայի կամ երիտասարդի մարդկային արժանապատվությունը, իրավունքները, զգացմունքներն ու կարծիքները,

- ստեղծեն միասնականացնող երկխոսության հնարավորություններ՝ փոխադարձ հարգանքն ու համագործակցությունը քաջալերելու նպատակով,

- հիմնեն երեխաների և երիտասարդների գործուն մասնակցություն դպրոցական կյանքի բոլոր ոլորտներում՝ հատկապես ուսման և ուսուցման գործի և դպրոցական միջավայրի վրա պաշտոնական ու ոչ պաշտոնական մեթոդներով ազդելու և դպրոցի աշակերտական խորհուրդներին դպրոցական համայնքի կառավարման մեջ ներգրավելու միջոցով,

- կրթությունը վարեն երեխայի կամ երիտասարդի մարդկային արժանապատվությունը հարգող և նրանց կարծիքների ազատ արտահայտման ու դպրոցական կյանքին մասնակցելու հնարավորություն տվող եղանակով, օրինակ՝ օգտագործելով ուսուցման հաղորդակցական մեթոդները և ընդունելով ոչ պաշտոնական կրթությունն ու անկաշկանդ ուսումը,

- աջակցեն երեխաների և երիտասարդների ներգրավմանը միավորումների և համայնքի կյանքի, միջմշակութային ուսման, սպորտի, ժամանցի և արվեստների մեջ և աշխատեն երեխաների ու երիտասարդների հետ՝ ստեղծելու համար մասնակցության դյուրամատչելի ու ոչ պաշտոնական մեթոդներ,

- ներդրումներ անեն երեխաների և երիտասարդների կողմից ղեկավարվող ոչ կառավարական կազմակերպություններում՝ որպես ժողովրդավարություն և քաղաքացիություն սովորելու և իրագործելու բարենպաստ ոլորտներում,

- հիմնեն խորհրդատվական մարմիններ երեխաների և երիտասարդների համար տեղական, տարածքային և ազգային մակարդակներով, ինչպես՝ մանկական և երիտասարդական խորհուրդներ, խորհրդարաններ կամ համագումարներ,

- ապահովեն, որ երեխաներին և ընտանիքներին ծառայություններ մատուցողները աջակցեն երեխաներին և երիտասարդներին՝ մասնակցելու ծառայությունների ընդլայնմանը, մատուցմանը և բարելավմանը,

- ավելացնեն երեխաների և երիտասարդների հնարավորությունները՝ լրատվամիջոցներով ազատորեն արտահայտվելու և ապահով մասնակցություն ունենալու տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով՝ որպես դեմհանդիման մասնակցության լրացուցիչ գործիքներով, և ներառեն մասնակցության սկզբունքների ըմբռնումը լրատվամիջոցների և ՏՀՏ-ի մեջ,

- մեծացնեն երեխաների և երիտասարդների ունեցած հնարավորությունները՝ մասնակցելու հասարակական կյանքին և ժողովրդավարական մարմիններին՝ այդ թվում որպես ներկայացուցիչներ,

- աջակցեն երեխաներին ու երիտասարդներին և նրանց կազմակերպություններին՝ մասնակցելու ՄԱԿԵԻՄ-ի 12-դ հոդվածի և մյուս համապատասխան հոդվածների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի և երեխայի իրավունքների այլ միջազգային չափորոշիչների կենսագործման վերահսկողությանը։

Երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցությունը
Պատկերազարդումը Աննե- Սոֆի Շլիկի - © Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհուրդը

Եվրոպայի խորհուրդը 1949թ. հիմնադրված միջազգային կազմակերպություն է, որն այսօր ունի 47 անդամ երկրներ: Նրա դերն է առաջ մղել մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի տիրապետությունը: Նա հաստատում է ընդհանուր ժողովրդավարական սկզբունքներ՝ հիմնված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և այլ կոնվենցիաների ու հանձնա-րարականների վրա՝ նվիրված մարդկանց պաշտպանությանը, որը, անշուշտ, ընդգրկում է Եվրոպայի 150 միլիոն երեխաներին:

«Կառուցել Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ»

Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasburg Cedex
www.coe.int/children
children@coe.int